

Հավելված
Արփիի համայնքի ղեկավարի
22.05.2014 թվականի թիվ 27 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Վայոց Ձորի մարզի Արփիի գյուղական համայնքը հայտարարում է մրցույթ՝
Արփիի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության
հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար .**

**2. ՀՀ Վայոց Ձորի մարզի Արփիի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար
մասնագետ / ծածկագիր 3.1-3 /,**

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ
որակով.

բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում
համապատասխան փաստաթղթերը.

գ) հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան
ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է
բաժնի պետին.

դ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում,
նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային
ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ,
միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ
ընդունելության համար.

զ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի
մշակման աշխատանքներին.

է) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և
բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում
պատասխան.

ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ
լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված
այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ
պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն.

բ) <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման
մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի
կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի
անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր
իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

զ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2014թ. հունիսի 26-ին..` ժամը 13:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի գյուղապետարանի շենքում` գ.Արփի :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ` քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Արփիի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը`

ա/դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ/տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները` բնօրինակների հետ միասին,

գ/արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը` բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ/մեկ լուսանկար` 3X4 սմ չափսի,

ե/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ` ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք` նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է` հունիսի 10-ը 2014թ.` մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արփիի գյուղապետարանի աշխատակազմ /գ.Արփի, հեռախոս` /0281/ 6 21 10 և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն հեռախոս` (0281) 23061/:

Արփիի գյուղական համայնքի ղեկավար`

Գ.Գրիգորյան